

Անուն-----

Թուական-----

Մականուն-----

Քերականութիւն.-

ա.- Ընդգծէ՛ ^{adjective} ածականը եւ շրջագծէ՛ ^{noun} գոյականը:

- 1.- Ճերմակ բաղերը կը լողան:
- 2.- Կը սիրեմ պաղ ջուրի մէջ լողալ:
- 3.- Աշակերտները ցած ձայնով կը կարդան մեծ գրադարանին մէջ:
- 4.- Դասարանին մէջ տասը աշակերտ կայ. հինգ աղջիկ, տասը տղայ:
- 5.- Ընկերս սրճագոյն գնդակով կը խաղայ:
- 6.- Խոհարարը թարմ բանջարեղէնով համով ճաշ պատրաստեց:
- 7.- Ամէն օր երկու գաւաթ պաղ կաթ կը խմեմ:
- 8.- Նարինջը համով եւ ջրոտ պտուղ մըն է:
- 9.- Ոսկերիչը գեղեցիկ եւ փայլուն օղեր կը շինէ:
- 10.- Արին աշխատասէր, ճարպիկ եւ ընկերասէր տղայ մըն է: